ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Վերջին երկու հարյուրամյակի ընթացքում Իրանի արտաքին քաղաքականության մշակման գործում ռուսական (խորհրդային) գործոնը զգալի ազդեցություն է ունեցել: Իրանական տեսանկյունից վերջին դարերի ընթացքում այդ երկրի տարածքային ամբողջականության և ազգային անվտանգության ամենամեծ սպառնալիքը հանդիսացել է Ռուսաստանը (Խորհրդային Միությունը):

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանի արտաքին քաղաքականությունը բնորոշվում էր«Ոչ արևելք և ոչ էլ արևմուտք» կարգախոսով[1]: 1980-ական թվականների վերջերին և 90-ականների սկզբներին ռուս-իրանական հարաբերությունները համարյա բոլոր բնագավառներում բարելավվեցին: Այս գործընթացին մասամբ նպաստեց նաև այն հանգամանքը, որ իսլամական հեղափոխությունը ԱՊՀ մահմեդական շրջանների համար, ինչպես ակնկալվում էր, լուրջ «սպառնալիք» չդարձավ:

ԽՍՀՄ-ի փլուզումը և ռուս (խորհրդային)-իրանական ընդհանուր ցամաքային սահմանի վերացումը Իրանի արտաքին քաղաքականության պատմության համար շրջադարձային կետ է[2]: Նորանկախ պետությունների ստեղծմամբ Իրանի հյուսիսային սահմանների երկայնքով փոխվեց աշխարհաքաղաքական իրավիճակը.

1. Ռուսաստանի և Իրանի միջև բուֆերային գոտու ստեղծմամբ, վերջինիս համար անհետացավ անմիջական ռազմական սպառնալիքը:
2. Իրանը իր նոր հարևանների հետ կապված է ընդհանուր մշակութային շերտով:

Իրանի առջև ծառացած հին խնդիրները փոխարինվեցին միանգամայն նոր հիմնախնդիրներով: Իրանին այժմ անհանգստացնում է նորանկախ պետություններում առկա քաղաքական անկայունությունը և նրանց անկանխատեսելի արտաքին քաղաքականությունը: Տարածաշրջանում գերտերությունների մրցակցությունը բացատրվում է նրա աշխարհագրական բարենպաստ դիրքով

---

[1] Изречения великого вождя исламской революции. Тегеран, 1995, էջ 153-158.

[2] Aymeric Chauprade, Francois Thual. Dictionnaire de geo'politigue, ellipses, 1999, էջ 210.

և էներգոռեսուրսների հարուստ պաշարներով: Իրանին բաժին է ընկնում նավթի համաշխարհային պաշարների 9-10%-ը (14-17 մլրդ տ. կամ 90 մլրդ բարել)[3]:

Ռուսաստանի համար Իրանը ռազմավարական կարևոր դիրք է գրավում: Արևմուտքում այն սահմանակից է Թուրքիային, հարավում ելք ունի դեպի Պարսից ծոց, իսկ հյուսիսում՝ Կասպից ծով: Հյուսիսից նա սահմանակից է Ադրբեջանին, Հայաստանին, Թուրքմենիային: Տարածքով Իրանը հավասար է Աֆղանստանի ու Պակիստանի տարածքներին իրար հետ միասին վերցրած, իսկ Թուրքիայի տարածքը գերազանցում է մոտ երկու անգամ: Սակայն Իրանի այս առանցքային դերը պայմանավորված է միայն աշխարհագրական և ժողովրդագրական գործոններով, իսկ տնտեսական ու քաղաքական տեսանկյունից ամրագրված չէ[4]: Վերոհիշյալ «բացը» Իրանը ջանում է լրացնել խորացնելով համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ: Աշխարհում ընթացող գործընթացները, ԽՍՀՄ-ի փլուզումը իրանական կողմին ստիպեցին վերանայել իրենց քաղաքականությունը Ռուսաստանի հանդեպ, որն այժմ դիտարկվում է որպես ռազմավարական կարևոր դաշնակիցներից մեկը[5]: Իր հերթին, Ռուսաստանը այս տարածաշրջանում բնական է համարում ակտիվ գործունեություն տարածել, քանի որ այն անմիջականորեն հարում է իր հարավային սահմաններին և շոշափում է նրա կենսական շահերը[6]:

Վերջին հինգ տարիների ընթացքում երկու երկրների հարաբերություններում արձանագրվել է լուրջ առաջընթաց: Առայժմ Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի երկրներում իր տնտեսական քաղաքականությունը մշակելիս Իրանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ տարածաշրջանում առաջնային դեր է խաղում Ռուսաստանը, որի հետ անհրաժեշտ է պահպանել բարիդրացիական հարաբերություններ: Ռուսաստանը մի կողմից լայն շուկա է իրանական ապրանքների համար, իսկ մյուս կողմից՝ այն ունի զարգացած ռազմական արդյունաբերություն, միջուկային տեխնոլոգիաներ, բարձրակարգ մասնագետներ և այս տեսանկյունից ԻԻՀ համար կարևորվում է նրա նշանակությունը: Իրանը Չինաստանից ու Հնդկաստանից հետո, երրորդ խոշոր ռուսական զենքի ներկրողն է[7]:

---

[3] А. Кожухов.Ближний Восток и Каспий в энергетической стратегии США.- центральная Азия и Кавказ, N 6, 2002, էջ 85

[4] Mohammad-Reza Djalili at Thierry Kellner.Geopolitique de la nouvella Asia Centrale, Presses Universitaires de France. 2003, էջ 129; Мусульманские страны у границ СНГ. М., 2001, էջ 6

[5] Гаджиев К. С. Геополитика Кавказа, М., 2001, էջ 334.

[6] Иванов И. С. Новая российская дипломатия. Десять лет внешней политики страны. М, 2002, էջ 166

[7] Аббас Малеки. Иран и Туран: к вопросу об отношениях Ирана с государствами Центральной Азии и Закавказья, Центральная Азия и Кавказ N5, 2001, էջ 113

Ռուսական փորձագետների հաշվարկներով Մոսկվայի ռազմա-տեխնիկական համագործակցությունը Թեհրանի հետ տարեկան կկազմի մոտ 25 մլրդ դոլար: Ռազմական նոր պայմանագրեր կնքվեցին և համագործակցությունը ակտիվացավ 2001թ. ամառվանից[8]:

Հարկավոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Իրանի առջև ներկայումս ծառացել են բավական լուրջ դժվարություններ: Երկրի տնտեսությունը խոշոր կապիտալ ներդրումների կարիք է զգում, տնտեսության համարյա բոլոր բնագավառներում արտադրողականության աճը զիջում է համաշխարհային տնտեսական միջին աճի ցուցանիշներին: Իրավիճակը բարդացել է նաև 1995թ. ԱՄՆ-ի կողմից իրականացվող և 2001թ. ամռանը (ևս 5 տարով) երկարացված տնտեսական պատժամիջոցների ու տնտեսության պետական կառավարման հետ կապված դժվարությունների հետևանքով: Դրանք նույնիսկ արտացոլվել են իրանական մամուլում:

Ներկա պահին Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում չեն հակասում Ռուսաստանի ազգային շահերին: Այս տարածաշրջանում Իրանի ռազմավարական շահերը կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

Առաջին, ամենից առաջ այն կապված է տարածաշրջանի երկրների և հատկապես Թուրքմենստանի, Ղազախստանի, Տաջիկստանի ու Հայաստանի հետ քաղաքական հարաբերությունների զարգացմամբ և առևտրական կապերի ու ներդրումների ընդլայնմամբ:

Երկրորդ, Թեհրանը աշխատում է սահմանափակել այլ երկրների մուտքը սեփական էներգակիրներով հարուստ շրջանները և տարածաշրջանում աջակցել այն ճյուղերի զարգացմանը, որոնք մրցակցություն չեն ստեղծում իրանական համանման արտադրության հետ:

Երրորդ, տարածաշրջանի պետությունների հետ հարաբերություններ հաստատելով Իրանը աշխատում է ճեղքել ԱՄՆ-ի կողմից պարտադրված մեկուսվածության օղակը:

Չորրորդ, գործնական, բարիդրացիական հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ:

Այսպիսով ԽՍՀՄ-ի «հարավային գոտու» նախկին հանրապետությունների հետ Իրանը իր հարաբերությունները կառուցում է երեք ուղղություններով.

ա. տնտեսական բնագավառ

բ. քաղաքականության և անվտանգության բնագավառ

---

[8] Нартов Н. А. Геополитика, М., 2002, էջ 317

գ. առաջնային կարևորություն է տրվում հյուսիսային հարևանների հետ հարաբերությունների զարգացմանը[9]:

Քանի դեռ Իրանը գտնվում է քաղաքական մեուսացման մեջ՝ համընկնում են նրա և ՌԴ տեսակետները տարածքային անվտանգության և կայունության վերաբերյալ: Ռուսաստանը ևս ձգտում է խոչընդոտել ԱՄՆ-ի և Եվրամիության միահեծան ներկայությունը Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում: Ներկա պահին Ռուսաստանի հետագա թուլացումը կարող է տարածաշրջան մուտք բացել այլ երկրների համար՝ ստեղծելով անկայուն իրավիճակ, որն էլ իր հերթին վտանգելու է Իրանի ազգային անվտանգությունը[10]:

Երկու երկրների միջև քաղաքական արդյունավետ համագործակցության օրինակ է նրանց խաղաղասիրական գործունեությունը Տաջիկստանում: Հատկանշական է, որ ի տարբերություն բազմաթիվ մահմեդական երկրների Իրանը չի դատապարտել Ռուսաստանի վարած քաղաքականությունը Չեչնիայում և այն չի դիտարկվում որպես հակամարտություն քրիստոնեական Ռուսաստանի և մահմեդական Չեչնիայի միջև: Ռուսաստանի և Իրանի շահերը պահանջում են նաև հակազդեցություն, ինչպես Թուրքիայի ուժեղացող ազդեցության, այնպես էլ իրենց տարածքներում թուրքալեզու ժողովուրդների անջատողականության նկատմամբ[11]:

Իրանի համար առաջնային նշանակություն ունեն Կենտրոնական Ասիայի հանրապետությունները: Այս ուղղությամբ Իրանի կողմից ձեռնարկված մի շարք քայլեր չարդացրեցին նրա ակնկալիքներ: Այսպես, Թուրքիայի և Պակիստանի հետ Իրանը 1992թ. վերանորոգեց Տնտեսական համագործակցության կազմակերպությունը, ուր ընդգրկվեցին Ադրբեջանը և Կենտրոնական Ասիայի երկրները: Բացի 1996թ. շահագործման հանձնված Մեշհար-Սերահստեջին երկաթուղու գծի, ուրիշ ոչ մի նշանակալից ծրագրեր իրականացնել չհաջողվեց[12]: Իրանը 1992թ. մարտին մերձկասպյան երկրներին առաջարկեց ստեղծել «կասպյան երկրների» բլոկ՝ ազատ առևտրի գոտու կարգավիճակով: Ստեղծվեց մերձկասպյան երկրների համագործակցության կազմակերպություն, որի կենտրոնը գտնվում է Թեհրանում և ուր ընդգրկվեցին Ռուսաստանը, Ադրբեջանը, Իրանը, Ղազախստանը և Թուրքմենստանը: Իրանը առաջարկեց

---

[9] The Security of the Caspian Sea Region. Oxford University Press, 2001, էջ 173; А. Малеки, Иран и Туран: к вопросу об отношениях Ирана ц государствами Центральной Азии и Закавказья. Центральная Азия и Кавказ, N 5, 2001, էջ 110.

[10] Санаи Мехди. Отношения Ирана с центральноазиатскими странами СНГ. М, 2002, էջ 43

[11] Гадусиев К. С. Геополитика Кавказа. М, 2001, էջ 336

[12] Pride of Small Nations. The Caucasus and Post-soviet Dicorder. 1993, London and New Jersey, էջ 58

ստեղծել գազ արտադրող և արտահանող երկրների միջազգային կազմակերպություն (Ադրբեջան, Թուրքմենստան, Ռուսաստան, Ուզբեկստան), առանց ՆԱՏՕ-ի երկրների մասնակցության: Սակայն Իրանի այս նախաձեռնությունը ևս անհրաժեշտ արձագանք չգտավ[13]:

Իրանական ղեկավարությունը շահագրգռված է նաև Անդրկովկասում հակաամերիկյան ուժերի ու տրամադրությունների առկայությամբ: Միջազգային բնագավառում Իրանը աջակցում է հակաամերիկյան ուժերին ու շարժումներին: Այսպիսով, առայժմ Իրանը ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իսրայելի համար Կովկասում ևս խոչընդոտ է հանդիսանում «նոր աշխարհակարգի» ստեղծման ճանապարհին: Իրանի դեմ պայքարը տարվում է մի քանի ուղղություններով.

Առաջին, արաբա-իրանական կոնֆլիկտների հրահրում (օրինակ, Օրմուզյան նեղուցի կղզիների շուրջ Արաբական Միացյալ էմիրությունների և Իրանի միջև վեճը, Արաբական երկրների լիգայի 1992թ. սեպտեմբերի 14-ի հակահիրանական հայտարարությունը),

Երկրորդ, ԱՄՆ-ի Թուրքիայի և մի շարք այլ երկրների կողմից ադրբեջանական գործոնի օգտագործումը Կովկասում իրանական ազդեցությունը թուլացնելու համար,

Երրորդ, ԻԻՀ ռազմական պոտենցիալի հզորացման կանխարգելումը,

Չորրորդ, Իրանի մեկուսացումը հարևան անդրկովկասյան հանրապետություններից (Պոլ Հոբլի նախագիծը),

Հինգերրորդ, Իրանին դուրս մղել կասպյան նավթի արտահանման ծրագրերից: Այսպես, ԱՄՆ-ի ճնշմամբ Բաքուն ստիպված էր հրաժարվել նախկինում Իրանին առաջարկված ադրբեջանական նավթային կոնսորցիումի պայմանագրի 5%-ից[14]:

ԱՄՆ-ին առավել անհանգստացնում է ոչ թե Իրանի իսլամական արմատականությունը, այլ Թեհրանի անկախ արտաքին քաղաքական կուրսը, այլընտրանքային «երրորդ ուղու» զարգացման հնարավորությունները, որը կարող է հանգեցնել նոր բևեռի ստեղծման: Այս հանգամանքը կարող է խառնել ԱՄՆ-ի խաղաքարտերը և վտանգել ատլանտիզմի անընդմեջ ձգվող ափամերձ հատվածը Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի ռազմավարական կարևոր հատվածում: Զ. Բժեզինսկու կարծիքով Եվրասիայում իրադարձությունների զարգացման ամենավտանգավոր տարբերակը կարող է հանդիսանալ «հակահեգեմոնիստական» կոալիցիայի ստեղծումը Չինաստանի, Ռուսաստանի և Իրանի մասնակցությամբ, որոնց կապող օղակ է հանդիսանում

---

[13] Տես՝ А. Малеки, Иран и Туран... նշված հոդվածը, էջ 113

[14] Сваранц А. Пантюркизм в геостратегии Турции на Кавказе., М, 2002, էջ 384

ոչ թե գաղափարախոսությունը, այլ փոխլրացնող աշխարհաքաղաքական շահերը[15]:

Այսպիսով, մինչև առ այսօր Ռուսաստանի և Իրանի միջև գոյություն չունեն լուրջ հակամարտություններ: Ռուսաստանը Իրանից ակնկալում է հետևյալ քայլերը.

Առաջին. Ռուսաստանի մահմեդական շրջաններում և Կենտրոնական Ասիայում իսլամի քարոզչության հարցում Իրանի կողմից «խաղի կանոնների» պահպանում,

Երկրորդ. Տաջիկստանում ազդեցության ոլորտների հստակեցման հարցում ԻԻՀ կողմից զսպվածության դրսևորում և միջտաջիկական հակամարտության կարգավորման ուղղությամբ ռուս-իրանական համագործակցության շարունակում,

Երրորդ, Իրանը պետք է ընդունի, որ Հայաստանում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում պետք է առաջնային համարվեն ռուսական շահերը,

Չորրորդ, Կասպից ծովի կարգավիճակի որոշման խնդրում Իրանը պետք է պաշտպանի Ռուսաստանի մոտեցումները,

Հինգերորդ, Իրանը պետք է ըմբռնումով մոտենա Արևմուտքի հետ ռազմական համագործակցության ուղղությամբ ձեռնարկվող Ռուսաստանի որոշ քայլերին:

Իր հերթին Իրանի Իսլամական Հանրապետությունը ակնկալում է Ռուսաստանից.

Առաջին. զենքի, տեխնիկայի, տեխնոլոգիաների մատակարարման և ապահովման հարցերում ակտիվ գործողություններ,

Երկրորդ, Կասպից ծովի կարգավիճակի և էներգառեսուրսների օգտագործման հարցում գործողությունների կոորդինացում և միասնական մոտեցումների մշակում,

Երրորդ, միջտաջիկական խնդրի կարգավորման հարցում համատեղ գործողությունների շարունակում և աջակցության ԻԻՀ ջանքերին Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացում կրկին ներգրավվելու ուղղությամբ,

Չորրորդ, համատեղ ջանքերով թույլ չտալ, որպեսզի խաղաղասիրական ուժերի քողի տակ տարածաշրջան մուտք գործեն արևմտյան տերությունները,

Հինգերորդ, կոորդինացնել ուժերը ՆԱՏՕ-ի ընդլայնումը Անդրկովկաս և Կենտրոնական Ասիա կանխելու համար,

---

[15] Бжезинский Зб. Великая шахматная доска. М, 2000, էջ 72

Վեցերորդ, ընդլայնել տնտեսական կապերը հատկապես նավթի, գազի արդյունահանման և տեղափոխման, ատոմային էներգետիկայի բնագավառում,

Յոթերորդ, համատեղ մշակել և իրականացնել կոմունիկացիոն ծրագրեր, ստեղծել Բալթիկ ծով-Պարսից ծոց տրանսպորտային առանցքը,

Ութերորդ, առավել «հանդուրժողականություն» դրսևորել իսլամական արժեքների հանդեպ Ռուսաստանի կառավարող կառույցների, հասարակության և քաղաքական ուժերի շրջանում[18]:

Երկու պետությունների համար Հայաստանը կարևոր նշանակություն ունի որպես կապող օղակ, իսկ Իրանի համար՝ նաև որպես հակազդող գործող Ադրբեջանին ու Թուրքիային: Ինչպիսի հեռանկարներ են սպասվում այս ուղղությամբ և ինչպիսին պետք է լինի Հայաստանի դիրքորոշումը:

Այսօր հարավային ուղղությամբ գործող տարածաշրջանային երկու կենտրոնների՝ Թուրքիայի և Իրանի միջև Ռուսաստանը առավել հակված է դեպի Իրանը: Թուրքիան և Իրանը մրցակից են Անդրկովկասում և Միջին Ասիայում: Թուրքիան աջակցություն ստանալով Արևմուտքից առավել ճկուն քաղաքականություն է վարում և ի վիճակի է ժամանակի ընթացքում տարածաշրջանից դուրս մղել և Իրանին, և Ռուսաստանին: Ռուսական քաղաքական էլիտան երկընտրանքի առջև է: Հարկավո՞ր է արդյոք համախմբել ուժերը Իրանի հետ Թուրքիային (հասկանալ նաև Արևմուտքին) հակազդելու համար: Այն բավական բարդ խնդիր է: Դեռևս խորհրդային տարիներին նման հարց էր առաջացել կապված Հնդկաստանի ու Պակիստանի, Իրանի ու Իրաքի հետ փոխհարաբերություններում, իսկ հետխորհրդային տարիներին՝ Ադրբեջանի ու Հայաստանի, Հյուսիսային Օսեթիայի ու Ինգուշեթիայի վերաբերյալ: Եթե երկբևեռ աշխարհում այն առավել հստակ էր (Թուրքիա-ՆԱՏՕ), ապա այժմ, եթե նկատի չունենանք աշխարհաքաղաքական ուժերի պայքարի համատեքստում գործող սխեմաները (թալասոկրատիա-ծովային ուժ և թելուրոկրատիա-ցամաքային ուժ), ապա ընտրության կայացումը այնքան էլ հեշտ խնդիր չէ: Ընտրության ոչ միանշանակ լինելու խնդիրը միայն Ռուսաստանին չի վերաբերում: Այսպես, ԱՄՆ-ը երկար ժամանակ ընդդեմ Իրանի աջակցում էր Իրաքին, որը հանգեցրեց Պարսից ծոցում ռազմական գործողությունների: Այսօր ԱՄՆ-ը մտադիր չէ աջակցել այդ երկու երկրներից և ոչ մեկին[20]:

Ռուսաստանի այսօրվա ղեկավարությունը հասկանում է, որ թուլացած երկիրը չի կարող հանդես գալ որպես աշխարհաքաղաքական դաշինքի հենք (և

---

[16] Сусанна Петросян. Россия —Армения-Иран: диалог цивилизаций, Центральная Азия и Кавказ, N 4, 1999, էջ 21

[20] Макаренко В.В. Кто союзники Росии? Ментальность и геополитика: парадоксы политики безопасности России. М, 2000, էջ 21

արդյոք դա անհրաժեշտ է Ռուսաստանին) իր վրա կրելով այդ միության ողջ ծանրությունը և այլ երկրի համար դաշնակից հանդիսացող «փեսացուից» վերածվել է դեռևս լավ «օժիտ» ունեցող հարսնացուի: Ինչ հիմնական ընտրության տարբերակներ ունի Ռուսաստանը: Դրանք հետևյալն են.

ա) «ատլանտյան»-դաշինք ՆԱՏՕ-ի հետ ԱՄՆ-ի գերիշխանության ներքո,

բ) «եվրոպական»-դաշինք եվրոպական (հիմնականում Գերմանիա և Ֆրանսիա) երկրների հետ,

գ) «եվրասիական» դաշինք Չինաստանի հետ ընդդեմ ԱՄՆ-ի,

դ) «հակաիմպերիալիստական»-դաշինք Իրանի և երրորդ աշխարհի որոշ երկրների հետ ընդդեմ ԱՄՆ-ի:

Եվրոպական «հակաամերիկյան ընդդիմությունը» այսօր իրական չէ, քանի որ հիմնական եվրոպական պետությունները կտրուկ պետք է փոխեն իրենց արտաքին կողմնորոշիչները, ընդ որում ԱՄՆ-ը պետք է գտնվի դիտորդի վիճակում ու վարի եվրոպական «սխալ» քաղաքականություն: Նկատի ունենալով Չինաստանի ներկա զարգացման տեմպերը և ռեսուրսները «եվրասիական» դաշինքի դեպքում Չինաստանը կհանդիսանա լիդերի դերում (ի տարբերություն XX դ. 50-ական թվականների, երբ այդ դերում հանդես էր գալիս ԽՍՀՄ-ը), իսկ Ռուսաստանը ապահովագրված չի լինի Սիբիրը կորցնելուց:

«Հակաիմպերիալիստական» դաշինքը ևս հղի է բազմաթիվ վտանգներով: Եթե Իրանը ՌԴ աջակցությամբ ստեղծի միջուկային զենք, ապա Հնդկական օվկիանոսը կվերածվի իսլամական ազդեցության ոլորտի: ԱՄՆ-ը կամ ստիպված կլինի ռազմական գործողություններ սկսել, կամ էլ, որն ավելի հավանական է հրաժարվի հարցի լուծման ուժային տարբերակից: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, սակայն զարգացման այս տարբերակը ևս ձեռնտու չէ Ռուսաստանին, քանի որ ԱՄՆ-ի հեռացումը Ասիայից Իրանին և մի շարք այլ տարածաշրջանային երկրների, կմղի առավել ակտիվ քաղաքականության (այդ թվում նաև հյուսիսային ուղղությամբ): Ի վերջո, ռուս-իրանական դաշինքը վերջնական արդյունքով ավելի ձեռնտու է Իրանին, քան Ռուսաստանին, որը միայն մատակարարի դերում է հանդես գալու, եթե իրանցիները փորձեն իրենց խնդիրները լուծել ռազմական ճանապարհով: Ուժեղացած Իրանը, որը հանգեցնելու է մեծ Պարսկաստանի ստեղծմանը (2 մլն կմ2), ավելի հզոր է լինելու, քան Ռուսաստանը: Իրանի բնակչությունը 15-20 տարվա ընթացքում կկրկնապատկի, իսկ Ռուսաստանի բնակչությունը կնվազի հասնելով 131.5-138.7 մլն-ի: Անհրաժեշտ է արդյոք Ռուսաստանին իր սահմանների հարևանությամբ ունենալ հզոր Մեծ Պարսկաստան, կամ Մեծ Չինաստան: Կարծում ենք, որ ոչ:

Մյուս կարևոր հարցը Հայաստանի համար այն է, թե ինչքան երկար կտևի ռուս-իրանական համագործակցությունը: Մեր կարծիքով Իրանը միայն սպա-

սում է հարմար առիթի Արևմուտքի հետ հարաբերությունները կարգավորելու համար և «ռուսական խաղաքարտի» օգտագործումը առավել շահավետ պետք է դարձնի Իրանի դիրքը: Կկրկնվի «Սադաթի սցենարը», երբ Եգիպտոսը տնտեսական և ռազմական սերտ համագործակցությունից կտրուկ «սառեցրեց» իր հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ և հակվեց դեպի ԱՄՆ-ը: Իրանական որոշ բարձրաստիճան քաղաքական գործիչներ լավ են հասկանում, որ առանց Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի աջակցության հնարավոր չէ ապահովել այդ երկրի տեխնոլոգիական և տնտեսական զարգացումը:

Արևմուտքի համար կասպիական նավթի նշանակությունը բարձրանալու է, հետևաբար պետք է հաղթահարվեն այդ ճանապարհին առկա բոլոր խոչընդոտները և մեծանա Արևմուտքի ակտիվությունը: Եթե Ռուսաստանը հապաղի կարգավորել իր մերձեցումը Արևմուտքի հետ, ապա հավանության կարժանանան այն ծրագրերը, որոնք հակասում են այդ երկրի շահերին: Իսկ հետագայում անդրկովկասյան և միջինասիական հանրապետություններին Արևմուտքը նաև ռազմական օժանդակություն ցույց կտա, որպեսզի թուլացնի, կամ կանխի Ռուսաստանի և Իրանի ազդեցությունը տարածաշրջանում: Ստեղծված իրավիճակում Ռուսաստանի համար առավել կարևոր է, որպեսզի Արևմուտքի հարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ հակառուսական բնույթ չկրեն: Բացի այդ, հարավից Ռուսաստանին ամերիկացիները չէ, որ սպառնում են և այդ խնդիրը ավելի դյուրին է լուծել վերջիններիս մասնակցությամբ, քան հակադրվելով նրանց:

Հասկանալի է, որ Ռուսաստանը և Իրանը որպես հարևաններ, պետք է զարգացնեն տնտեսական կապերը, այդ թվում նաև ռազմական համագործակցությունը, սակայն այն կիրականացվի միջազգային իրավունքի սահմաններում և Ռուսաստանի ազդեցությունը կհամապատասխանի նրա տնտեսական ու ռազմա-քաղաքական պոտենցիալին:

Այսպիսով, Ռուսաստանի և Իրանի ռազմա-քաղաքական դաշինքը մեր կարծիքով հակասում է երկու երկրների հեռանկարային շահերին և ավելի շատ թելադրված է առկա միջազգային պայմաններով: Ռուսաստանի և Իրանի միջև հարաբերությունների զարգացման տենդենցը, մեծ կարևորություն ունի նաև Հայաստանի համար: Ինչպես Ռուսաստանում (Ա. Միտրոֆանով, Ա. Դուգին և ուրիշներ), այնպես էլ Հայաստանում կան ուժեր, որոնք գտնում են, որ ձևավորվելու է Մոսկվա-Թեհրան առանցքը, որին պետք է միանա նաև Հայաստանը: Ցավոք սրտի պետք է նկատի ունենալ և այդ մասին է վկայում դեպքերի զարգացման տրամաբանությունը, որ Ռուսաստանի ազդեցությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում աստիճանաբար նվազելու է: Միջազգային հարաբերություններում այսօր առաջատարը Արևմուտքն է՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ և

Ռուսաստանի ներկայիս ղեկավարությունը լավ է հասկանում, որ փորձերը նախկինի նման ինքնուրույն քաղաքականության իրականացման, կարող է նրան թողնել «խաղից դուրս» վիճակում:

Ամերիկյան մի շարք քաղաքագետներ և մասնավորապես Զ. Բժեզինսկին գտնում է, որ պետք է բարձրացնել Թուրքիայի դերակատարումը Անդրկովկասում և Միջին Ասիայում փոքրացնելով նրա կախվածությունը «արաբական» նավթից: Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքի կարևորությունը դրսևորվեց Աֆղանստանի և Իրաքի դեմ սկսված ռազմական գործողությունների ժամանակ: Թուրքիայի բնակչության տարեկան աճը կազմում է 2.5%, իսկ զինակոչային տարիքի երիտասարդների ամենամյա թիվը կազմում է 600 հազար, Թուրքիան XX դարի առաջին քառորդի ընթացքում ռազմական տեխնիկայի արդիականացման համար նախատեսել է 150 մլրդ դոլար, որի հետևանքով թուրքական բանակի հնարավորությունները կաճեն 1.5-2 անգամ[21]:

Ադրբեջանում և հատկապես Վրաստանում կայացած ընտրություններից հետո ստեղծված իրավիճակը (երբ ռուսներին վտարելու համար Թբիլիսիում գտնվող ԱՄՆ պետքարտուղարի փոխօգնական Լին Պասկոն խոստանում է դրամական օգնություն ցույց տալ) թելադրում է Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը առանց հապաղման մշակել ազգային անվտանգության նոր հայեցակարգ և քայլեր ձեռնարկել նախ և առաջ տնտեսական, բարոյա-քաղաքական և հոգևոր ոլորտներում առաջընթացն ապահովելու ուղղությամբ:

Այն, որ ԱՄՆ-ի հետաքրքրությունը Անդրկովկասի հանդեպ աճում է, վկայում է այն փաստը, որ ԱՄՆ-ի Սենատի արտաքին գործերի կոմիտեն պարբերաբար քննարկում է Անդրկովկասի և Միջին Ասիայի հանրապետությունների նկատմամբ Վաշինգտոնի վարած քաղաքականությունը: Հիմնական եզրակացությունը, որ արվել է այդ հարցերի քննարկման ժամանակ դա այն է, որ նորանկախ հանրապետությունները վերածվում են ԱՄՆ-ի կենսական շահերի ոլորտի և առաջնային նշանակություն ունի այդ երկրի համար: ԱՄՆ-ը պետք է գտնի այլընտրանքային էներգիայի աղբյուրներ և փոքրացնի իր կախվածությունը արաբական երկրներից[22]:

Իր ազդեցությունը տարածաշրջանում ուժեղացնելու համար ԱՄՆ-ը որդեգրել է այդ հանրապետություններում ժողովրդավարության ամրապնդման, նրանց միջև խաղաղության հաստատման, ազատ շուկայական տնտեսության զարգացման վարկածը, քանի որ «բարոյականության» տեսանկյունից անթերի

---

[21] Տես В.В. Макаренко-ի նշված աշխատությունը, էջ 77

[22] Гусейнов В.А. Каспийская нефть. Экономика и геополитика. М, 2002, էջ 87

այդ քայլը ԱՄՆ-ի համար ի համեմատություն Արևմուտքի որոշ երկրների, կամ Թուրքիայի ու Իրանի և հատկապես Ռուսաստանի նկատմամբ ավելի մեծ հնարավորություն է ստեղծում և կարևոր կռվան է: Վերջին մի քանի տարիների ընթացքում տարածաշրջանի բնակչության ընթացիկ հոգսերը հոգալու համար ԱՄՆ-ը հատկացրել է 2.2 մլրդ դոլար: Ներկայումս հումանիտար օգնությունից ԱՄՆ-ը փորձ է կատարում միջոցներ տրամադրել նրանց տնտեսական զարգացման համար: 1999թ. գարնանը ՆԱՏՕ-ի հոբելյանական գագաթաժողովում ընդունվեց նոր ռազմավարական հայեցակարգ, որի էությունը կայանում է նրանում, որ այն ռազմաքաղաքական պաշտպանական կառույցից վերածվում է հարձակողականի և «իրավունք» ունի գործելու իր տարածքից դուրս և նույնիսկ առանց ՄԱԿ-ի համապատասխան սանկցիաների՝ ահաբեկչության, սաբոտաժի, կազմակերպված հանցագործության դեմ և երբ վտանգված է նրա համար կենսական նշանակություն ունեցող ռեսուրսների անխափան մատակարարումը:

Ռուսաստանի ազդեցության աստիճանական նվազեցումը Անդրկովկասում անհանգստացնում է բազմաթիվ ռուսական (և ոչ միայն) քաղաքական գործիչների: Նշենք, որ ոչ Վրաստանում և ոչ էլ Ադրբեջանում (բացառություն կոմունիստական կուսակցությունների, որոնց ազդեցությունն աննշան է) չկա ոչ մի քաղաքական ուժ, կամ կուսակցություն, որը հանդես գա Ռուսաստանի հետ սերտ հարաբերություններ հաստատելու ծրագրով: Ռուսական սևծովյան նավատորմի կաթվածահար վիճակը, Ուկրաինայի շահագրգռվածությունը այդ շրջանում ռուսական ազդեցության թուլացմամբ, ՆԱՏՕ-ի առաջխաղացումը ստիպում են Ռուսաստանին նահանջել, իսկ ազատված հարթակը նախ և առաջ զբաղեցնում է ամերիկյան և թուրքական կապիտալը: Վերջին մի քանի տարիների ընթացքում անդրկովկասյան երկրների հետ Թուրքիայի ապրանքաշրջանառությունը աճել է 3 անգամ, ԱՄՆ-ը ներդրումների ծավալով դուրս է եկել առաջին տեղը, իսկ Ռուսաստանի տնտեսական կապերը նույն երկրների հետ կրճատվել են 3 անգամ[23]:

Հայաստանը պետք է աշխատի օգտագործել այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը չի շտապում արագ յուրացնել կասպյան նավթի հանքավայրերը, քանի որ ԱՄՆ-ի էներգետիկայի նախարարության տվյալներով, նավթի համաշխարհային արդյունահանումը իր գագաթակետին կհասնի 2010 թվականին, որից հետո այն կսկսի նվազել[24]:

---

[23] Տե՛ս В.А. Гусейнов-ի նշված աշխատությունը, էջ 100

[24] Геополитика каспийского региона, М, 2003, էջ 271

Չնայած հայ-ամերիկյան բարիդրացիական հարաբերություններին և ցույց տրվող ամերիկյան տնտեսական օգնությանը, այդ երկրի շահերը պահանջում են գերադասել Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունները հայ-ամերիկյանից: Հետևաբար ԱՄՆ-ի վերջնական դիրքորոշումը չի կարող հայանպաստ լինել:

Ռուս-իրանական հարաբերությունները ավելի շատ որոշվում են ամերիկա-իրանական հարաբերությունների լարվածությամբ, քան աշխարհաքաղաքական, տնտեսական կամ գաղափարական հակադրմամբ: Իրանական ճանապարհը կոմերցիոն առումով ամենագրավիչն ու բարենպաստն է: Հետևաբար այն չի կարող ընդհանրապես անտեսվել և մեղմանալու է ամերիկա-իրանական հարաբերություններում առկա լարվածությունը:

Ռուսաստանի համար զարգացման հնարավոր տարբերակներն են

Առաջին, Ադրբեջանը և Վրաստանը դարձնել որպես «չեզոք բուֆերային գոտի» (ներկայումս համարյա այդպես է), որը փաստացի նշանակում է այդ տարածաշրջանը զիջել Արևմուտքին,

Երկրորդ, ակտիվ քաղաքականության վարել և համագործակցել Անդրկովկասի հանրապետությունների հետ այն բնագավառներում, որտեղ շոշափվում են ռուսաստանյան շահերը (հատկապես տնտեսական և էներգետիկ անվտանգության բնագավառում): ՌԴ Անվտանգության խորհուրդը առավել հակված է այս տեսակետին.

Երրորդ, գնալ «նավթային հակամարտության» ուղով:

Հայաստանը, որը ՌԴ-ից կախվածություն ունի ռազմավարական անվտանգության, իսկ ԱՄՆ-ից տնտեսական բնագավառում, հայտնվել է բավական բարդ իրավիճակում: Այսօրվա ադրբեջանական ղեկավարությունը հասկանում է, որ դարաբաղյան խնդիրը չի լուծելու ռազմի դաշտում, իսկ դիվանագիտական բնագավառում Ադրբեջանի հիմնական և առայժմ միակ խաղաթուղթը նավթն է:

Հայաստանը պետք է մոբիլիզացնի իր բոլոր ռեսուրսները, նոր իրավիճակին համապատասխան մշակի արտաքին քաղաքականության առաջնային խնդիրները, հստակեցնի հնարավոր կոմպրոմիսների սահմանագիծը:

Մեր կարծիքով Հայաստանի համար դեպքերի զարգացման ամենաբարենպաստ իրավիճակը ԱՄՆ-ի և Ռուսաստանի Իշխանությունների միջև տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ փոխհամաձայնության ու համագործակցության կայացումն է, քանի որ այլևս «անհարմար» իրավիճակներ չեն ստեղծվի Հայաստանի քաղաքական ուժերի համար և հարկ չի լինի «մանևրել» Մոսկվայի ու Վաշինգտոնի միջև: